

ՄԻԱՍԱՆԹՈՅԻ «ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒՋԵՄ ՄԵՆՆԻԼ» ՔԱՆԱՍԵՂՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՌՈՍԵՐԵՆ

Միամանրոյի «Ես երգելով կուգն մեռնիլ» բանաստեղծությունը «Из западноармянской поэзии» ժողովածուում («Սով. գրող», 1979 թ.) ներկայացվում է Ա. Տեր-Հակոբյանի թարգմանությամբ, նույն թարգմանությամբ բանաստեղծությունը տպագրվել է հայկական քնարերգության անթոլոգիական երկհատորյակում «От «Рождения Ваагна» до Паруйра Севака» («Սով. գրող», 1983 թ.): «Поэма гнева» ժողովածուում այս բանաստեղծությունը տպվել է Վ. Տոպորովի թարգմանությամբ:

Երկու թարգմանությունների համեմատական ուսումնասիրումը և համադրումը քննարկի հետ ի հայտ է բերում, թե քննարկին, անցնելով թարգմանչի գրչի տակով, ստանալով մի նոր լեզվի ձևավորում, որքանով է հարազատ մնում հեղինակին բնորոշ գեղարվեստական առանձնահատկություններին, որքանով է արտահայտում (կամ չի արտահայտում) նրա ոգին, միտքը, ոճը, ժամանակաշրջանի հատկանիշները, վերջապես, ազգային երանգը:

Ա. Տեր-Հակոբյանին հաջողվել է ոուսերենով արտահայտել բանաստեղծության ոգեշունչ, բազմահույզ ոգին, բյուրեղյա մաքրությամբ վերարտադրելով հեղինակի հայրենասիրական պոռթկումը, կյանքի կարոտը, հերոսական ինքնազոհությունը, մարտնչող հերոսզինվորի խորիմաստ գիտակցումը, որ ինքն անհավասար մարտի է զնում, որ պիտի զոհվի, սակայն նրան պոետի երգերից մի երգ է պետք: Առանց դույզն-ինչ աղճատելու թարգմանության լեզուն, թարգմանչուին հաղորդել է պոետի բարձր հոգու անբոնադատորեն ասկետիկ տրամադրությունը, երբ նա ստիպված է «Փրկության ու Տառապանքի մտարովը» Հայրենիքի բախտը կշռել: Թարգմանության մեջ օգտագործված չեն ազադակող ներբողներ, որոն-

ցով պիտի արտահայտվեր բանաստեղծի վիշտը: Ռուսերենով, ինչպես և բնագրում, հերոսների միտքն ու վարքը պարզ են ու հստակ. նրանք չեն վախենում արյունից, նրանք նկարագրված են հերոսին արժանի գեղեցկությամբ ու ժպիտով, նրանց ճակատագիրը նույնն է, նրանք ունեն մի միասնական ցանկություն՝ հաղթել կամ մեռնել:

Ա. Տեր-Հակոբյանի այս թարգմանության մեջ կան, անշուշտ, որոշ թերություններ էլ, բայց հիմնականում թարգմանությունն արված է ստեղծագործաբար, բարձր տրամադրությամբ, ոուսերեն գրված տողերից ընթերցողին է նայում հայ մեծ քնարերգուն իր զուլալ հայացքով ու անբիծ խղճով: Թարգմանության բարձր պոֆեսիոնալիզմը ընթերցողին հանգեցնում է այն մտքին, որ թարգմանչին այս բոլորը հեշտությամբ է հաջողվել: Հատկապես հաջողված են թարգմանության առաջին տողերը, որոնք համեմատելիս, բառ առ բառ համընկնում են քննարկի հետ, և այդ չի խոչընդոտում թարգմանության կատարելությանը:

Սպասումիս և Հույսիս քաղցրությանը հետ
մինակ էի այդ իրիկում,

Եվ Փրկության ու Տառապանքի մտարովը՝
Հայրենիքին բախտը կկշռեի...

Со сладостью Надежды, Ожиданья
я был наедине в тот вечер.
И взвешивал весами Спасенья и
Страданья я Родины судьбу...

Յավոր, Վ. Տոպորովի թարգմանությունը, որն արված է Ա. Տեր-Հակոբյանի թարգմանությունից ավելի ուշ, հիշեցնում է ինչ-որ մեկի անհաջող տողացի թարգմանություն, ուր բացարձակապես բացակայում է հեղինակի կերպարը, բանաստեղծության հոգեբանական գո-

բավոր լույսը, նրա բանաստեղծական ոճը, որն ընթերցողին ներարկում է հայրենասիրություն, հերոսություն, քնարականություն, դրամատիզմ: Կարդալով Վ. Տոպորովի թարգմանությունը, դժվար է նույնիսկ բանաստեղծության իմաստը հասկանալ, ուր թե զգացվի վերը թվարկված համանասնություններից որևէ մեկը: Թարգմանության ծանր, դժվարամարս բնույթն ստեղծվում է թարգմանչի կողմից օգտագործվող բազմաթիվ անտեղի շրջադասությունների պատճառով, բնագրին հակառակ, ոչնչով շարդարացված ուղղումներով, չհաջողված «հանդիսավոր» ոճով: Համեմատության համար նորից բերում ենք նույն առաջին տողերը, բայց այս անգամ Վ. Տոպորովի թարգմանությամբ:

Сладость надежд моих, сладость
мечтаний,
я с ней одинок был в тот вечер.
Судьбы Отчизны я взвешивал - чаша
Страданья
и чаша Спасенья,- о, эти весы!..

Բնագրում հեղինակը պատմում է Պոետի տագնապի մասին, երբ ջարդի օրը իր դուռն էլ է բախում: Պարզվում է, որ այդ ոչ թե դահիճներն են, այլ Ջինվորն է, որը նրա մոտ է եկել օրհնություն ստանալու, եկել է երգի մեջ մարմնավորված Հայրենիքի պաշտպանության գահափառը տանի իր հետ, քանի որ լուսաբացին նա գնում է մարտի: Այս միտքը հեղինակն սկզբում է հետևյալ քառերով.

Երբ հեռակա տանս դուռը...
Գիշերվան սարսափին մեջեն ուժգնապես
բախեցին:

Պոետի տունը քաղաքի ծայրամասում էր, այդ պատճառով «հեռակա» բառը հեղինակի տեքստում երկու իմաստ է ենթադրում: Առաջինն այն է, որ տեսեք, քարքարոսները այս հեռավոր թաղամասին էլ հասան, իր տունն էլ գտան, իրեն հոշոտելու ժամն էլ է հասել: Երկրորդ իմաստն այն է, որ եկվորը, որը Ջինվորն էր, երկար ճանապարհի է անցել, միզուցե անհրաժեշտ է համարել թեթել իր ճանապարհն ու հասնել Պոետի տանը, որովհետև երզը, որն ինքը եկել է խնդրելու, հասարակ մխիթարու-

թյուն չէ, դա մի պարզ վահան, թախման չէ, որն, այդ գուցե և իրեն պահապան լինի. այդ երզը նրան հարկավոր է որպես նշանաբան, որպես հաղթանակի դրոշ՝ ի վկայություն նրա իրավացիության ժողովրդի հարատևման սըրբազան պայքարում:

Այժմ համեմատենք, թե այս մտքերն ինչպես են արտահայտված թարգմանություններում:

Տեր-Հակոբյանի թարգմանությամբ.

Но в дверь мою в полночный страшный час
вдруг сильный стук раздался.

Վ. Տոպորովի թարգմանությամբ.

С черного хода, сквозь ужас ночной,
постучали -
и дом содрогнулся.

Այնքան է, որ Տոպորովին չի հաջողվել ուսալեզու ընթերցողին հասցնել Սիամանթոյի մտքերը, բանաստեղծության իմաստը, որովհետև թարգմանության տեքստում անտեղի օգտագործված բառն ու հասկացությունները («С черного хода» և «дом содрогнулся») խախտում են բանաստեղծության իմաստն ու քվանդակությունը, նրա ոգին:

Պոետի մոտ եկած Ջինվորի հայացքը նկարագրող հեղինակի կողմից օգտագործված ծավալուն փոխաբերական կերպարը.

Այլընտրում կայծը երկնքի աստղերին էր,
որ կծորեր...

Տեր-Հակոբյանը թարգմանել է.

А искра мая его была опавшей искрою
звезды:

իսկ Տոպորովը թարգմանել է.

И как звезды небесные, сыпали искрой
маза.

Այս տողը Տեր-Հակոբյանի թարգմանությամբ պահպանել է հեղինակի տրամությունը. «опавшей искрою» Տոպորովը թարգմանելով այս փոխաբերությունը չի նկատում ու կորստյան է մատնում Սիամանթոյի շքեղ, իր արտահայտչականությամբ հարուստ լեզվական

ոճը, որով նա իր զուսպ ձայնով պատարագում էր եղեոնի գոհեբրին, ինչն ինքնընտանիքյան արդեն ստեղծում է նրա ողջ պոեզիային բնորոշ համդիսավորությունը: Ահա թե նա ինչպես է նկարագրում Հերոսի կեցվածքն ու մտածողությունը:

Եվ հասակին ձևերը մարմարներու
զորություններն էր կերտված...
Մտածումը մարդկային արդարության
էջերնն հստակորեն ջահավառյալ...

Բերում ենք Տեր-Հակոբյանի թարգմանությունը, որը մոտ է բնագրին.

И выточен был стан его из мышиц
прекрасных мраморов,
А мысль рвалась из пламенных странниц
великой справедливости людской...

Այժմ նույն տողերը կարդում ենք Տոպոբովի թարգմանությամբ.

Был он изваян из мрамора белым
туманом
решимости восстановить справедливость
объятый.
А на челе цветы боли и блага цвели...

Տոպոբովի Հերոսը ոչ մի ընդհանուր բան չունի Սիամանթոյի Հերոսի հետ. դա մի անհասկանալի ֆանտաստիկ մարմարակերտ կուռք է, ճակատին ցավի ու բարիքի ծաղիկներ, որը պատած է վճռականության սպիտակ մշուշով՝ վերականգնելու արդարությունը: Եթե թարգմանիչն ուսումնասիրեր Սիամանթոյի ստեղծագործությունը, նա կպարզեր, որ մարդկային արդարության հասկացությունը ամենևին էլ այդքան վերացական ու մշուշոտ չի, այլ ծրագրային է նրա պոեզիայում: Այդ նա էր, Սիամանթոն, որ ի սրտե արտասանել էր, թե կուզենար թքել այդ անգո արդարության երեսին: Տոպոբովի թարգմանությամբ կարդում ենք.

Рядом воссели мы, речь заведя все о
том же -
о скорби Отчизны.

Այս ոչ մեծ նախադասության մեջ արդեն

կա երկու անհամատեղելի ոճ. մեկը՝ վերամբարձ ("воссели"), մյուսը՝ ծեծված-ստորեական ("все о том же"), որոնք ոչ մի կերպ չեն ազդարարում "о скорби Отчизны" ներթափանցող բառերը: Հետո նա թարգմանում է.

И голова от мучительных дум стала
черно - кровавой,
как сердце сраженного в битве героя...

Վտանգավոր գունախաղ է, քանի որ հեղինակը բոլորովին չի ասում, թե գլուխը տարբեր մտքերից կարող է փոխել իր գույնը, այլ այն մասին, որ Հերոսի գլխում ծանր մտքեր էին, սգավոր կիսաաստվածի արյունվա սրտի մման:

Այս թարգմանությունը կարելի է անվանել հեղինակային տեքստի շրմբերգվածության օրինակ, քանի որ ի՞նչ է մտածելու ոռու ընթերցողը հայ քնարերգու Սիամանթոյի մասին, հեղինակի ի՞նչ կերպար կնկարագրվի նրա զրլխում, երբ նա կարդա.

Взгляд его мглою запечатанный, ту же
печать надломил на моем.
Наша печаль, меж двух душ восставая,
сияла немеркнувшим светом.

Ռուս ընթերցողն այստեղ արդեն անտեսելով իրեն անհայտ Սիամանթոյին, կվրդովի ոռուսաց լեզվի հետ այս աստիճանի կամայական վերաբերմունքից: Իսկ հեղինակն ինչ է գրել...

Նայվածքները նայվածքներուս մեջ,
նույն ճակատագրին խորհրդանիշը փնտրեցին...

Եվ մեր տրտում ժպիտները հոգին հոգի
մեղմորեն ճառագայթվեցան:

Իր համառոտությամբ բանաստեղծության չափերի մեջ միաբերած հիմնի մման այս դրամատիկ պոեմը զրված է արտահայտիչ, լակոնիկ ճոխ արևմտահայերենով, և այս բանաստեղծության մեջ արտացոլվել է Սիամանթոյի կերպարը՝ նուրբ քնարերգուի կերպարը, որն ստիպված եղավ իր ողջ ստեղծագործությունը նվիրել անմեղ ժողովրդի եղեոնի ողբերգական թեմային:

Թարգմանչին չի հաջողվել գտնել համապատասխան բառեր ու շեշտավորում Սիամանթոյի համդիսավոր-թախծուտ ոճը ոռուսերեն

նով վերարտադրելու համար: Մահվան գնացող Հերոսի շուրթերով նա բարձր բառեր է արտասանում հավատի մասին, նրա ձեռքն է տալիս գերմարդկային հատուցման մերկացրած թուրը: Սիամանթոյի Հերոսը հավատում է լավ ապագային, նա խնդրում է Պոետին պատմել գալիք սերունդներին ժողովրդի ցավի, վշտի, ուժի մասին: Տոպոբովի թարգմանությունից բերված թարգմանիկ օրինակները ապացույց են, որ թարգմանչի լեզուն աղքատիկ բառապաշար ունի ու չի արտահայտում բնագրի ոճը, հեղինակի տրամադրությունը, ուրույն, եզակի կոլորիտը: Նրա օգտագործած բառերն ու արտահայտությունները չեն համապատասխանում Սիամանթոյի լեզվին, չունեն միայն Սիամանթոյին բնորոշ ուրույն քնարականությունը: Բերում ենք ևս մի քանի օրինակ. "голову

вскинул", "схватил меня за руку", "поднял (меня) рывком", "отомщу за отца", "прекрасен армянской красою": Վերջին երկու արտահայտությունները բնագրում չկան: Ասել է պետք նաև, որ թարգմանությունը չի պահպանել բանաստեղծությանը բնորոշ մեղեդայնությունն ու դիժնը:

Վ. Տոպոբովի թարգմանության այսքան խիստ քննադատությունը ոչ մի դեպքում չի տարածվում ժողովածուի մնացած թարգմանությունների վրա, ընդհակառակը, շնորհակալությամբ խոնարհվում ենք այն հսկայական, ծանրագույն աշխատանքի առաջ, որը կատարել են Վ. Բալասանը, Մ. Շատովան, Վ. Սոլոնովիչը և այլք, Սիամանթոյի գործերը ողուերեն հնարավորին չափ լավ թարգմանելու համար:

Մ. Մ. ՀԵՐՈՍԻ-ՍԱՐԳՍՅԱՆ